ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի «Զորավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի լոգոպեդի (0,5 դրույք) հաստիքի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2022թ. N 471 Ա/2 հրամանով հաստատված թեստավորման և հարցազրույցի հարցաշարերի համաձայն:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին՝ Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում(Ձև 1),մեկ լուսանկար 3Х4 չափի,
- Կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
- Անձը հաստատող թաստաթուղթ,
- Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 4),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածներից ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),

Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ.փետրվարի 17-ից մինչև մարտի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00,բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ.մարտի 22-ին՝ ժամը 11:00-ին,«Զորավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում,հասցե՝ գ.Զորավան,1-ին փողոց.11 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել **093-47-21-86** հեռախոսահամարով: